

Դիմանկարներ քիչ է տուել, ընդամենը մի քանի հատ : Դրանց մէջ յայտնի են Կոմիտասի երկու պորտոպետները եւ Յովհ. Թումանեանի սքանչելի դիմանկարը :

## ՆՆՐՍԷՍ ՕՀԱՆՆԱՆ

Տարագրութեան բարոյալքւած պայմաններու մէջ տառապելով՝ վերջերս Փարիզի մէջ մեռաւ մէկը մեր լաւագոյն այլ համեստ հասարակական գործիչներէն : Երբեք կուսակցական չէ եղած, բայց լաւաւոյն բարեկամն էր ամէն անոնց, որոնց մէջ կը տեսնէր անշահախնդիր ու նւիրւած իրական մշակը հայ հայրենիքի եւ ժողովրդի :

Որք էր եւ որբանոցներու մէջ մեծցաւ, ու երբ նետւեցաւ կեանքին երախը, նւիրւեցաւ աղգային-հասարակական ասպարէզին, իրեն յատուկ եռանդովն ու անշահախնդիր խանդովը : 1890-1918 թ. թ. Պոլսոյ հայ հասարակական եւ աղգային գործիչներէն էր : Համեստ էր անոր մտաւոր պաշարը, բայց բովանդակ իր կարողութիւնը ու մանաւանդ բարոյական կորովը ի սպաս դրած էր ժողովուրդին :

Մասնաւորապէս ջերմ գուրգուրանք մը ունէր զէպի դեռահաս սերունդը. հայրիկն էր անոնց իր բովանդակ առումով. անոնց ամէն մէկ կը թափան, մարդական եւ այլ դաստիարակիչ ձեռնարկ կամ շարժում կը քաջալերէր անով : Ներսէս Օհանեանը իր բովանդակ բարոյական դիմագծով եւ զգայուն հոգիով աչքի դարկաւ մանաւանդ սահմանադրութեան տարիներէն մինչեւ ընդհ. պտերադմին սկիզբը :

Սահմանադրութեան առաջին դերագոյն խանդավառութիւններու շրջաններուն, մանկական յափշտակութեամբ կը հետեւէր հայ զարթօնքին ու անոր առաքեալներու քայլերուն : Այդ տարիներուն աղգային երեսփոխան էր եւ ժողովին խղճի ձայնն էր յաճախ՝ բոլոր ներքին աղտեղութիւններու մթնոլորտին մէջ : Երբեմն կուսակցական կիրքը իր ծայրայեղ աստիճաններուն հասած վայրկեաններն, անոր հուժկու եւ խոր ցաւով ու անկեղծութեամբ լեցուն, մերթ յանդիմանական եւ մերթ աղերսական շեշտն էր, որ կը մեղմացնէր կիրքերը : Բազմաթիւ անգամներ նա իւրովի միջնորդի դեր ստանձնած է կուսակցութիւններու միջեւ տիրող տարակարծութիւնները վերացնելու եւ համագործակցութիւն ստեղծելու համար :

Շատ կապւած էր Վռամեանին եւ Զարդարեանին. երկրպագուն էր Շահրիկեանի մտրակող բնաւորութեանը :

Այս նւիրւած ու ժողովրդասէր մարդը, համեստ իր դիւրքովը, լուսաւոր շող մըն էր անցեալ երկու տասնամեակներու արեւմտահայ քաղաքական եւ հասարակական կեանքին մէջ :